Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ՇՃ պայմանագրի

**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 5**

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 15. Շիրակի մարզ - ճաշարան |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Ներկայացման օր | 10.01.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սննդի (տաք ճաշ) տրամադրման ծառայության շրջանակներում կազմակերպության նախագահի կողմից հաստատված ճաշացանկով, ճաշարանում շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, ինչպես նաև սուրճ, միրգ և քաղցրավենիք: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունից օգտվել է 100 շահառու:
- Սոցիալական խորհրդատվության տրամադրման շրջանակներում համակարգող/սոցիալական աշխատողը ճաշարան դիմող անձանց տեղեկատվություն է տրամադրել ճաշարանից օգտվելու կարգի վերաբերյալ, վերահսկել ճաշարան հաճախող շահառուների հաճախելիությունը, ճշտել բացակայությունների պատճառները, անհրաժեշտության դեպքում իրականացրել տնայցեր: Համակարգող/սոցիալական աշխատողը պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել շահառուներին իրենց իրավունքների, համայնքում գործող սոցիալական ծրագրերի վերաբերյալ:
- Այլ ծառայությունների տրամադրում.
  - Հոգեբանական աջակցության կարիք ունեցող 44 շահառուի հոգեբանը անհատական խորհրդատվություն է տրամադրել, իսկ 23 շահառու ներգրավվել է հոգեբանական խմբային հանդիպումներին:
  - Շփման և զբաղվածության կարիք ունեցող 61 շահառու մասնակցել է կենտրոնում գործող խմբակներին (առողջ ապրելակերպ, մամուլի ընթերցում, քննարկում, գրական, խոհարարական, հոգեբանական):
  - Ճաշարանի 67 շահառու մասնակցել է հետևյալ միջոցառումներին՝ էքսկուրսիա դեպի Դիլիջան, Հաղարծին, Պարզ լիճ, Գոշավանք, Խաչղողորինեք, էքսկուրսիա դեպի Սաղմոսավանք, Հովհաննավանք, Սևան, Խաչվերացի տոն, Անկախության տոն, էքսկուրսիա դեպի Սառնաղբյուր, այց Գագիկ Մկոյանի հեղինակային համերգին, էքսկուրսիա դեպի Հառիճավանք, շահառուների ծննդյան տոների նշում, Սուրբ Զատիկ, Առաջին Հանրապետության օր, Հայոց ցեղասպանության հիշատակի օր, Համբարձման տոն, Երեխաների պաշտպանության միջազգային օր, Բարև ամառ, Սուրբ Ծննդյան տոն, Հայկական Բանակի օր, Տեառնընդառաջ, Տոնաշխարհի ծմեռ, Կանանց միջազգային օր, Ծաղկազարդ, Տարեցների միջազգային օր, այց Մինաս Ավետիսյանի տուն-թանգարան, Գրական-երաժշտական միջոցառում երգի խմբավար Գոհար Հարությունյանի մասնակցությամբ, Ամանորի տոնական միջոցառում, էքսկուրսիա դեպի Վահրամաբերդի եկեղեցի, միջոցառում «Հրաժեշտ աշնանը», այց Մատենադարան և Ազգային պատկերասրահ, Դեկտեմբեր ամսվա հիշարժան օրերի նշում, հանդիպում քահանաներ Տեր Մակարի և Տեր Սողոմոնի հետ, շահառուի մկրտություն Աստվածածին ս. Ստեփանոս եկեղեցում Տեր Մակար քահանայի ձեռամբ:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրված նյութերի հղումները առկա են եռամսյակային հաշվետվություններում:

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև չափանիշների ցուցակը):**

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

- Հաշվետու ժամանակահատվածում Գյումրու համայնքային կենտրոնի սոցիալական աշխատողը մասնակցել է.
  - ✓ «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի կողմից կազմակերպած «Տարեցների հետ տարվող սոցիալական խնամք» թեմայով առցանց հանդիպմանը:
  - ✓ «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կենտրոնական գրասենյակի կողմից կազմակերպված «Դեպքի վարման մեթոդաբանություն» թեմայով դասընթացին:
- Բարեգործական ճաշարանի բոլոր աշխատակիցները մասնակցել են «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ կենտրոնական գրասենյակի կողմից կազմակերպված թիմ բիլդինգին՝ ուղղված Կազմակերպության ողջ անձնակազմի թիմային ոգու բարձրացմանը, փորձի փոխանակմանը:
- Բարեգործական ճաշարանի խոհարարները մասնակցել են «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ կենտրոնական գրասենյակի կողմից կազմակերպված «Առողջ սնուցման սկզբունքները» թեմայով վերապատրաստմանը:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| Ի/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 103/100 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 68 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 28 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 12 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 11 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 23 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 72 |
| 1.4 | երեխաներ (միայն ճաշարանի պարագայում) | 1 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 100 |
| 3. | Այլ ծառայություն (նշել Միջոցառումների և ժամանցի կազմակերպում | 95 |

Կազմակերպության ղեկավար Երվանդ Մխիթարյան «10» 01.2024թ

[illegible]